ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծն ուղղված է երկու երկրների միջև զբոսաշրջության կայուն զարգացմանն ու զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

Համաձայնագիրը կնպաստի երկու երկրների զբոսաշրջության բնագավառի իրավասու պետական մարմինների, ինչպես նաև ոլորտի զարգացմանն աջակցող այլ զբոսաշրջային կազմակերպությունների միջև համագործակցության խթանմանը՝ երկու պետությունների միջև կազմակերպված և անհատական զբոսաշրջության խրախուսման, զբոսաշրջության բնագավառում համատեղ ծրագրերի իրականացմանն աջակցության, փորձագետների փոխանակման, զբոսաշրջության և հյուրանոցային գործի բնագավառներում կադրերի պատրաստմանն աջակցության միջոցով:

Համաձայնագրի իրագործման շրջանակներում երկրներն ըստ անհրաժեշտության կփոխանակեն զբոսաշրջության վիճակագրության, երկու երկրներում կազմակերպվող զբոսաշրջության և հյուրանոցային գործի բնագավառներում կրթական ծրագրերի, համաժողովների, սեմինարների և գործնական հանդիպումների, ներդրումային հնարավորությունների և այլնի վերաբերյալ տեղեկատվական նյութեր, ինչը կնպաստի միմյանց զբոսաշրջային արդյունքի ճանաչմանը և խթանմանը:

Համաձայնագրի շրջանակներում կստեղծվի համատեղ հանձնաժողով, որը պատասխանատու կլինի սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար և որի գործունեությունն ուղղված կլինի դրանց իրականացման ընթացքում ծագող խնդիրների լուծմանը:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրումը համարում է նպատակահարմար:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ԶԱՐՈՒՀԻՆԵ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ